«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
# 2025-2026
# Մայրենի (4-րդ դասարան)

Անուն Հայրանուն Ազգանուն ____________________________________________

Դպրոց ____________________________________________________________

Դասարան ___________ Խումբ ___________

---

**1**. Գայանեն գրատախտակին գրել էր մեղմօրոր, կծկվել, ճամփորդել, մախթանք, կրծել, պարգեվել, կծկտուր, խոնարհել, ըմբշամարտիկ, դաշյուն, երփնավառ, երբեմն, բրդոտ, բացարձակ, ակընթարթ, արցյունք, արդուզարդ, բզկտել, օրստորե, ընթերցել բառերը: Արսենը ջնջեց սխալ գրված բոլոր բառերը: Քանի՞ բառ ջնջեց Արսենը: Սխալ գրված բառերը գրի՛ր ճիշտ. /3,5միավոր/

ա) երեք  բ) չորս  գ) հինգ  դ) վեց  ե) յոթ

_____________________________________________________________________________

_____________________________________________________________________________

_____________________________________________________________________________

_____________________________________________________________________________

______________________

**2**. Տրված վիզ, հյութալի, կույր, ապերախտ, լոկ բառերը տեղադրի՛ր այնպես, որ պահպանվի առակի հատվածի ամբողջությունը: /1միավոր/

Ա՛յ ______________________ կենդանի,
Ով քեզ նման ____________________ ունի,
Իր ______________________ աչքով չի՛ տեսնի,
Որ կաղինը______________________
____________________այս ծառն է քեզ տալի...

**3**. Դեմ դիմաց գրված բառերից ստացի՛ր նոր բառեր: /1,2 միավոր/

նախշուն, նկարիչ ____________________________________________

գթասիրտ, անծանոթ ____________________________________________

մայրաքաղաք, բալենի ____________________________________________

ուղեգիր, ծառատունկ ____________________________________________

**4**. Գծով միացրո՛ւ հեղինակի անունը համապատասխան ստեղծագործությանը:          / 1,2 միավոր /

Ղազարոս Աղայան          «Սուտլիկ որսկանը»
Հանս Քրիստիան Անդերսեն          «Ձիպոլինոյի արկածները»
Հովհաննես Թումանյան          «Կարմիր Գլխարկը»
Շառլ Պերրո          «Անահիտ»
Ջանի Ռոդարի          «Ջրահարսը»

**5**. Երբ ականջ, ջահել, լուրջ, վերջ, ջահ  բառերում  նույն տառը պահմտոցի խաղա, այդ բառերը կկերպարանափոխվեն: Ի՞նչ նոր բառ չենք ստանա բառերի կերպարանափոխումից հետո: /1միավոր/

ա)  տարեց          բ) ռումբ          գ) տեղեկություն          դ) վախ          ե) շեղ

**6**.  Ո՞ր բառն է հետևյալ շարքերում «ավելորդ» : Ընդգծի՛ր այն: /1միավոր/

ա) բաղձալի, անձկալի, ցավալի, ցանկալի, տենչալի

բ) դյութիչ, բրիչ, հմայիչ, գրավիչ, հրապուրիչ

**7**. Լրացրո՛ւ աղյուսակը:   /2,7 միավոր/

| Բառը | հոմանիշ | հոմանիշ | հականիշ |
|---|---|---|---|
| ծածուկ | | | |
| կազդուրվել | | | |
| երախտամոռ | | | |

**8**. Նախադասությունների  մեջ բաց թողած բառերը լրացրո՛ւ  ողջ  բառի համապատասխան հոմանիշային իմաստներով:          /1 միավոր/

Թագավորի կրտսեր որդին հաղթահարեց պատերազմի բոլոր դժվարությունները և _______________________  վերադարձավ տուն: Նա _________________________ տարին անհոգ և երջանիկ ապրեց պալատում:

**9**. Երեքի տանը հյուրընկալվեցին եռանկյունը, եռաժանին, երեքնուկը, երեսնանոցը, եռանդունը, եռյակը, եռմանը, երեսունը և զեռունը: Ոմանք նրա հարազատներն էին:
Նշի՛ր օտարների շարքը:     /1միավոր/

O երեսունը, եռյակը, եռանկյունը

O երեսնանոցը, երեսունը, եռանկյունը

O եռանդունը, զեռունը, եռմանը

O եռյակը, եռաժանին, երեսունը

O եռաժանին, երեսնանոցը, երեքնուկը

**10**. Տրված դարձվածքներն արտահայտի՛ր մեկ բառով: /1,5միավոր/

Սիրտը դող ընկնել____________________________________

աչքը ջուր կտրել_____________________________________

բերանը բաց մնալ_____________________________________

ծանր ու թեթև անել ___________________________________

արյունը գլխին խփել __________________________________

**11**. Ավարտի՛ր առած-ասացվածքները: /1,5միավոր/

Մի հիմար քարը ծովը գցեց, ______________________________________________________

Ծառի տակին պառկելով՝________________________________________________________

Թռչունը թևով է թռչում,_________________________________________________________

Օձի կծածը կլավանա, __________________________________________________________

**12**. Ընտրի՛ր առածներից մեկը և հորինի՛ր պատմություն այդ վերնագրով: /3,4միավոր/

______________________________________________________________